Լաստիվերտցին 1045 թիւն է նշանակում Գրիգոր Պահլաւունու մագիստրոսութեան պատիւ ստանալու ժամանակը, ուրեմն եւ այդ թուականից յետոյ՝ մինչև Կոստանդին Մոնոմախի վախճանը (✻ 1054 թ.) պէտք է նշանակել Հաւուց Թառի, Կեչառիսի եւ Մարմաշէնի մասին եղած հոգացողութիւնները։ Նա սիրում է թուել կայսերական գահոյքից ստացած շնորհներն ու տիտղոսները. «Մագիստրոս», «ա̃ծապահ կիտաւն և դուկ»(1), «Ե՛կ տէր իմ, Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր և մօնումախին մագիստրոս, վէստ և դուկ»(2)։ Ինչպիսի՜ ուռուցիկ խօսքերով է յիշում Կոստանդին կայսեր շնորհած հրովարտակի և ոսկի մատանու մասին Մարմաշէնի Սոսթէնէս վանահօրը։ Ճիշդ նոյն հոգեբանութիւնն է և չարականի «կեցո զորդի ծառայի քո, զոր ի Հռոմայ գահիցն վերապատուեցեր» խօսքերի մէջ, որ որդուն չէ վերաբերում, ինչպէս հասկացել է Մանուէլ Բջնեցին, այլ իրեն, հետևելով Սաղմոսի խօսքերին՝ «կեցո՛ զորդի աղախնոյ քո, են»։ Այդպէս էլ Վարդանը վերագրել է Աշոտ պատրկի որդուն, մինչդեռ այդ մասին խօսք չկայ Ղեւոնդի կամ նորան հետևող Ասողկի մէջ։ Այս բոլորից յետոյ եզրակացնել կարող ենք.

ա. Աշոտ պատրկի և Հաւուց Թառի Ամենափրկչի նոյնութեան համար չունինք ցուցում հին աղբիւրներում. այդ շփոթութիւնը ծագել է տեղերի և անուան նմանութեամբ, այն էլ ուշ ժամանակներում։

բ. Աղբիւրների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նրանց տեղեկութեան և նկարագրութեան նիւթ եղած Ամենափրկիչը ծագմամբ կապուած է Գրիգոր Մագիստրոսի հետ և ոչ Աշոտ պատրկի. տեղով և ծագման ժամանակով տարբեր են երկու Ամենափրկիչները։

գ. Հաւուց Թառի արձանագրութեան և չարականի աղերսն ապացոյց է նրանց հեղինակների նոյնութեան, որ Գրիգոր Մագիստրոսն է և գրել է իւր կեանքի այն շրջանում, երբ բիւզանդական բարձր պաշտօնեայ էր։

Դ.

Մագիստրոսի արձանագրութիւնից տեսանք, որ իւր շինած տաճարից առաջ՝ Հաւուց Թառում եղել է մի այլ եկեղեցի. Այրիվանեցին ՆԾ–ՆԿ. (1001-1011) թուականների մէջ նշանակում է. «շինի Հաւոյ Թառ ի Գէորգ իշխանէն Բեղոյ». արդեօ՞ք սրան են վերաբերում արձանագրութեան խօսքերը առաջին ուխտի մասին, թէ մի աւելի հին շէնքի, դժուար է ասել. յամենայն դէպս աւանդութիւն կար ուխտի աւելի հնագոյն ծագման նկատմամբ։ Մանուէլ Բջնեցին «աթոռ Տրդատայ (Տրդատայ թա՞խտ) և մեր Պարթեւայ որդոյն Անակայ», «դիր Մեսրոպա» և «տեղ Սահակայ թարգմանչացն» է համարում. մինչև իսկ բառախաղութեամբ «թառ թարգմանութե̃» կոչում։ Նոյն վանքում գրուած յիշատակարանի հեղինակ եւս, «Նաթանայէլ եպիսկոպոս Հայոց Թառոյ», որ պէտք է ապրած լինի ԺԴ. դարի երկրորդ կիսին կամ ԺԵ.ի վերջերին, որի խօսքերը առիթ կ'ունենանք մէջ բերելու, կրկնում է նոյն մտքերը և ապա աւելացնում, թէ «յետոյ նորոգեաց սպարապետն Գորք իշխան»։ Առ հասարակ Գառնիի այդ շրջանի վանքերի՝ Գեղարդ, Աղջոց Ս. Ստեփանոս, Հաւուց Թառ, հնութիւնը կապում են Լուսաւորչի և Սահակ Պարթեւի հետ(1)։

Այս աւանդութիւնների մատնանշած ժամանակից ոչ մի յիշատակ չունինք Հաւուց Թառում. որմերի և թափթփած հին քանդակների հնութիւնը հասնում է ԺԳ–ԺԱ. դարերը միայն. 1679 թուի մեծ երկրաշարժը յատկապէս կերպարանափոխ է արել վանքի արտաքին տեսքը(2)։ Ընդհանուր տեսարանի մասին գաղափար է տա-

(1) Ձեռ. էջմ. Գց. N 223. Հազարտողեանի սկըզբնաւորութեան մէջ։

(2) Կոստանեան. Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 213։ Տե՛ս եւ նորա արձանագրութիւնը Կեչառուաց վանքում. մեր Դրչ. Ար. § 21։

(1) Գեղարդի մասին տես Յովհ. Կաթ. Դրասխանակերտցի. Ղուկ. հրատ. 335։

(2) Շարժի մասին Ձեռ. էջմ. N 548, 347։ Ջալալեան. Ճանապ. ի մեծն Հայաստան. Տփխիս, 1842, Բ. 127։ Նաեւ մեր «Խաղբակեանք» Ա. 258։